ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«22» «դեկտեմբերի» 2025 թվական № 495-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ԱՐԾՎԱԲԵՐԴԻ ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ 2024-2033 ԹԹ. ԱՆՏԱՌԱՇԻՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ (ԱՆՏԱՌԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով անտառային օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի № 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը, շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության 2025 թվականի մայիսի 7-ի ԲՓ №-105-25 պետական փորձաքննական եզրակացությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. Հաստատել շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Արծվաբերդի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2024-2033թթ. անտառաշինական նախագիծը՝ համաձայն հավելվածի:

2. Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության պետին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած հնգօրյա ժամկետում ապահովել անտառաշինական նախագծի (անտառակառավարման պլանի) հանձնումը շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

3. Շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ «Արծվաբերդի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառային տնտեսության վարումն իրականացնել սույն հրամանի առաջին կետով հաստատված անտառաշինական նախագծին (անտառակառավարման պլանին) համապատասխան:

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

12/22/2025

X

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Երևան